ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 132

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
07-029-0269-0104 կադաստրային ծածկագրով 0.0547 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող	07-029-0269-0104 կադաստրային ծածկագրով 0.0547 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով.

- ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից նշված պահանջը՝ կառուցված շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ինժեներական ենթակառուցվածքներն իրականացվեն բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

4. Նաիրի համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Զովունի բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝ ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Հ. Դավթյան

Երևան, «29» «հունիսի» 2022 թ.